ՀՕՄ-ի Թորոնթոյի
«Ռուբինա» Մասնաճիւղ

Տոհմիկ Օր

Չօնուած՝

ԱԽԻՋԵՒԱՆԻՆ

եւ Հինգ Գաւառներուն

Գողթան
Երնջակ
Նախիջեւան
Ճահուկ-Շահապոնք
Շարուր

28 Հոկտեմբեր, 2017
Թորոնթօ



ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՐՏԵՂ



ՆԱԽԱԲԱՆ

ՆԱԽԻՋԵՎԱՆ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ ՈՒ ԿԵՆՍԱՏԱՐԱԾՔ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս

Հայկական լեռնաշխարհի յուրաքանչյուր տարածաշրջան՝ լինի աշխարհանահանգ, գավառ թե գավառակ, ունի իր ուրույն ու պատվավոր տեղը Հայոց բազմադարյա պատմության մեջ: Անշուշտ, որպես կանոն, մեծ տարածք ընդգրկող նահանգներն ավելի ծանրակշիռ դեր են խաղացել մեր ժողովրդի կյանքում, մասնավորապես Այրարատը, Տարոն-Տուրուբերանը, Վասպուրականը, Բարձր Հայքը, Արցախը, Սյունիքը և այլն: Սակայն կան նաև առանձին գավառներ, որոնք իրենց նշանակությամբ գրեթե չեն զիջել նահանգներին կամ ավելի ճիշտ՝ նրանց է պատկանել ամբողջ նահանգի պատմության ու մշակույթի առյուծի բաժինը: Այդպիսիք են Այրարատ աշխարհի Ոստան, Տուրուբերանի Տարոն, Բարձր Հայքի Կարին, Վասպուրականի Նախիջևան (Նախճավան) գավառները և այլն: Ցավոք, այդօրինակ վարչամիավորների մեծ մասն այսօր գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս: Նման տարածքներից է նաև պատմական Հայաստանի կենտրոնական մասում գտնվող Նախիջևան գավառը:

Նախիջևանը հնագույն հայկական գավառներից է: Նրա անունը կապվում է Աստվածաշնչյան հայտնի ջրհեղեղի պատմության հետ: Համաշխարհային ջրհեղեղից հետո Նոյ Նահապետի հանգրվանած առաջին բնակատեղին, այն է՝ նախապես իջևանելու վայր լինելու հանգամանքը, ծնունդ է տվել նրա Նախիջևան անվանմանը:

Սույն գավառը վաղնջական ժամանակներից եղել է հայկական զանազան պետական կազմավորումների կազմում. մաս է կազմել Արարատյան (Ուրարտու) թագավորությանը, կարևոր դերակատարում ունեցել Մեծ Հայքի կյանքում Երվանդական, Արտաշեսյան ու Արշակունյաց հարստությունների օրոք: Հատկանշական է, որ 4-րդ դարի վերջին Նախիջևանի տարածաշրջանում՝ հեթանոսական երգերի կենտրոն Գողթան գավառում է Մեծն Մեսրոպ Մաշտոցի մտքում ծնվել հայոց գրերի ստեղծման վեհ գաղափարը:

Գտնվելով Հայաստանի աշխարհագրական տարբեր շրջանները միացնող առևտրական ճանապարհների խաչմերուկում՝ Նախիջևանն առավել մեծ չափերով է ենթարկվել օտար նվաճողների հարձակումներին: Այն պատմության ընթացքում տեսել է բազմաթիվ արհավիրքներ, որոնցից թերևս առաջինը վերաբերում է արաբական արշավանքների ժամանակներին: Հասկանալով, որ հայ նախարարական համակարգը Հայաստանի ներքին ինքնավարության կարևոր աղբյուրներից է, արաբները որոշեցին վերացնել հայ իշխանական տներին: Նրանք խաբեությամբ 705 թ. Նախճավան կանչեցին 700-800 հայ նախարարների և նրանց ողջակիզեցին տեղի ու նրա հարևան Խրամավանի եկեղեցիներում: Շուտով սույն գավառը դարձավ Հայաստանում օտար՝ արաբական ցեղերի հաստատման առաջին վայրերից մեկը:

Այլադավան էթնիկ խմբերով Հայաստանի կենտրոնական շրջանների, այդ թվում՝ Նախճավան գավառաի հետագա բնակեցումը դադարեց 9-11-րդ դարերում՝ Բագրատունիների ու Արծրունիների թագավորությունների շրջանում: Բայց դժբախտաբար, այդ ժամանակաշրջանում էլ գավառը կովախնձոր դարձավ Սյունիքի և Վասպուրականի իշխանական տների միջև: Դժգոհ մնալով Նախճավանը Սյունիքին հանձնելու Սմբատ Ա Բագրատունու որոշումից՝ Գագիկ Արծրունին իրեն հռչակեց Վասպուրականի թագավոր՝ հիմք դնելով հայկական պետականության մասնատմանը:

Հետագա դարերի ընթացքում հայկական այլ գավառների թվում Նախիջևանը ենթարկվեց նոր փորձությունների սելջուկ-թուրքերի, մոնղոլների, թուրքմենական կոյունլու ցեղերի ներխուժումների հետևանքով: 16-րդ դարի սկզբներից սկսված թուրք-պարսկական երկարատև ու արյունալի պատերազմների թատերաբեմ դարձավ նաև Նախիջևանի տարածաշրջանը: 1604 թ. պարսից Շահ Աբաս արքան մեծ թվով հայերի այստեղից ևս բռնագաղթեցրեց Իրան: Երբեմնի վաճառաշահ Նախիջևան, Ջուղա, Ագուլիս և այլ քաղաքները զրկվեցին իրենց ժրաջան բնակիչներից: Տարածաշրջանի առևտրական դասն իր ազգանվեր գործունեությունը շարունակեց նաև օտարության մեջ՝ Սպահանի մերձակա, իր հիմնադրած Նոր Ջուղա բնակավայրում և հեռավոր Հնդկաստանում:

1639 թ. Կասրե-Շիրինի հաշտության պայմանագրով Նախիջևանի գավառն ընկավ Սեֆյան Իրանի տիրապետության տակ: Բնակչության մեջ իսլամական տարրը շարունակեց աճել: 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայում կնքված ռուս-պարսկական պայմանագրով գավառը միացվեց Ռուսական կայսրությանը: Այն նախ մտավ Հայկական մարզի, ապա՝ Երևանի նահանգի կազմի մեջ:

Ռուսական տիրապետության շրջանում գավառը որոշ չափով վերականգնեց իր նախկին հայեցի ժողովրդագրական պատկերը: Սակայն 1905-1906 թթ. տեղի թաթարների, 1918-1920 թթ. օսմանյան զորքերի կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով հայությունը կրկին տուժեց: 1919 թ. գավառը միացվեց Հայաստանի Հանրապետությանը: Սակայն 1920 թ. աշնանն այն բռնազավթվեց քեմալական թուրքերի կողմից, իսկ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի թուրք-ռուսական պայմանագրով ապօրինաբար տրվեց Խորհրդային Ադրբեջանին՝ պայմանով, որ վերջինս այն երրորդ կողմի, այն է՝ Հայաստանին զիջելու իրավունք չունի:

Նախիջևանի բռնակցումն ամրագրվեց նաև նույն տարվա հոկտեմբերի 13-ին Կարսում Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների ու Թուրքիայի միջև կնքված պայմանագրով, միայն այն տարբերությամբ, որ այս փաստաթղթից հանվեց Մոսկվայի պայմանագրի այն կետը, որն Ադրբեջանին արգելում էր Նախիջևանը զիջել որևէ երրորդ կողմի: Ինչևէ, հակահայ այս գործարքի հետևանքով զուտ հայկական գավառը հայտնվեց Ադրբեջանի կազմում՝ անգամ նրա հետ չունենալով ընդհանուր սահման: Մինչդեռ, այդ տարածքի բռնակցումով Ադրբեջանն Արարատյան և Շարուրի դաշտերը միմյանց միացնող «Գայլի դրունք» կոչվող մոտ 10 կիլոմետրանոց միջանցքով ընդհանուր սահման ստացավ Թուրքիայի Հանրապետության հետ:

Ադրբեջանի կազմում իշխանությունների վարած խտրական քաղաքականության պայմաններում Նախիջևանի հայության համար սկսվեց մի ծանր ժամանակաշրջան՝ արտագաղթ, հայկական հուշարձանների զանգվածային ոչնչացում, Խորհրդային Հայաստանի հետ նախիջևանահայերի առնչությունների սահմանափակում և այլն: Արցախյան շարժման օրերին հակահայ նոր քայլերի հետևանքով տարածաշրջանը լիովին հայաթափվեց: Ադրբեջանական բարբարոսության գագաթնակետը կազմեց 21-րդ դարի սկզբին Հին Ջուղայի հայոց գերեզմանատան հազարավոր խաչքարերի վերջնական ոչնչացումը:

Այսօր Արցախի հիմնահարցի արդարացի լուծումը սերտորեն կապվում է Նախիջևանի խնդրի հետ: Թուրք-ադրբեջանական գործակցության պայմաններում մեր հայրենիքի երբեմնի կարևորագույն մասերից մեկն այժմ վերածվել է իսկական ռազմական հենակետի մեր իսկ դեմ: Օրեցօր Նախիջևանի հանրապետության տարածքում ավելանում է թուրքական զինական ներկայությունը, որն ուղղակի վտանգ է մայրաքաղաք Երևանի ու ամբողջ Հայաստանի Հանրապետության համար: Ուստի նոր մարտահավերների շղթայում միանգամայն հասկանալի ու գնահատելի է Կանադայի Հայ օգնության միության հերթական սույն տարեգրքի նվիրումը **հավերժական հայրենիք ու կենսատարածք ՆԱԽԻՋԵՎԱՆԻՆ**:

ՆԱԽԻՋԵՎԱՆ
պատմական ակնարկ

Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Հովհաննես Ալեքսանյան

Հնագույն ժամանակներից Նախիջևանը Հայաստանի անբաժան մասն էր, որպես գավառ ընդգրկված էր Մեծ Հայքի Վասպուրական նահանգի մեջ, իսկ որպես երկրամաս, Նախիջևանը ներառում էր շրջաններ նաև պատմական Այրարատ և Սյունիք նահանգներից: Նախիջևանում գերակշռել է հայ էթնիկ տարրը, տարածված էր երկրագործությունը, առևտուրը, ունեցել է հոգևոր-մշակութային նշանավոր կենտրոններ: Երկրամասը նախ արաբների (VII դար), ապա սելջուկ-թուրքերի կողմից նվաճվելուց հետո (XI դար) զգալիորեն կորցրել է իր զուտ հայկական դիմագիծը, այստեղ սկսել է հաստատվել մահմեդական տարրը: XVI–XIX դ. սկզբին Նախիջևանը գտնվել է Իրանի (Սեֆյան, Ղաջարական) տիրապետության տակ: Դեռևս XVIII դ. կեսին, որպես առանձին վարչաքաղաքական միավոր, ձևավորվել է Նախիջևանի խանությունը: 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի արդյունքում Նախիջևանը նվաճվել և Թուրքմենչայի պայմանագրով անցել է Ռուսաստանին: Երևանի և Նախիջևանի խանությունների, Օրդուբադի օկրուգի հետ միասին Նախիջևանը մտել է Հայկական մարզի մեջ: Ռուսական կայսրության վարչատարածքային հետագա փոփոխությունների արդյունքում Հայկական մարզը վերացվել է և Նախիջևանը մտել է Երևանի նահանգի մեջ: 1917 թ. փետրվարյան ռուսական հեղափոխությունից հետո Կովկասյան փոխարքայության տարբեր կենտրոններում, այդ թվում՝ Նախիջևանում, ձևավորվեցին Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության մարմիններ, իսկ բոլշևիկյան հեղաշրջումից ու Առաջին աշխարհամարտից Ռուսաստանի դուրս գալուց հետո, 1918 թ. թուրքական զորքերը արշավեցին Անդրկովկաս: Մայիսյան հերոսամարտերի արդյունքում ծնունդ առավ Հայաստանի առաջին հանրապետությունը, սակայն թուրքական զորքերը հունիսին ներխուժեցին Նախիջևանի երկրամաս, ուր Ապրակունիսի մոտ պարտություն կրեցին գեներալ Անդրանիկի զորաջոկատի կողմից: Նախիջևանի մահմեդականների հակահայ գործողությունների, թուրքերի հետ դաշինքի պայմաններում, երկրամասը հուլիսին գրավվեց թուրքերի կողմից, տեղի ունեցավ հայության կոտորած և արտագաղթ: 1918 թ. նոյեմբերին Առաջին աշխարհամարտն ավարտվեց Անտանտի

հաղթանակով և պարտված Թուրքիան մինչև տարեվերջ իր զորքերը ստիպված էր դուրս բերել Անդրկովկասի, այդ թվում՝ Նախիջևանի, գրավված շրջաններից: Նորաստեղծ ՀՀ-ն դժվարությունների հանդիպեց Նախիջևանում իր իշխանության տարածման հարցում, քանի որ դրան խոչընդոտեցին նախ թուրքական օկուպացիան, ապա վերջիններիս հեռանալուց հետո թուրք գործակալների և ադրբեջանական մուսավաթականների ջանքերով տեղի մահմեդականների կողմից ձևավորված, այսպես կոչված, «արաքսյան հանրապետությունը», որը ենթական էր Ադրբեջանին և բացահայտում էր ՀՀ նկատմամբ տարածքային հավակնությունները թշնամական թուրք-ադրբեջանական առանցքի կողմից: 1919 թ. մայիսին ՀՀ զորքերը ադրբեջանական-մահմեդական խմբավորումները ճնշեցին Նախիջևանում և ՀՀ-ն իր վերահսկողությունը հաստատեց երկրամասի վրա: Այդուհանդերձ, ՀՀ-ին չհաջողվեց երկար ժամանակով վերահսկել իրավիճակը երկրամասում, ինչին խոչընդոտեցին թուրքական, մուսավաթական, տեղական մահմեդական խմբավորումների գործունեությունը և Անդրկովկասի խորհրդայնացմանը վերադարձած բոլշևիկյան ուժերը: Արդեն 1920 թ. հուլիսի 28-ին Խորհրդային Ռուսաստանի XI Կարմիր Բանակի զորամասերը մտան Նախիջևան և երկրամասում հաստատվեց Խորհրդային իշխանություն՝ Նախիջևանի Հեղկոմ:

ՀՀ զորքերի փորձը երկրամասում վերականգնելու Երևանի իշխանությունը ձախողվեցին, իսկ երկու շաբաթ անց՝ օգոստոսի 10-ին, Թիֆլիսում Հայաստանի հանրապետության և ՌԽՖՍՀ-ի միջև համաձայնություն կայացվեց, ըստ որի Նախիջևանը, Զանգեզուրն ու Ղարաբաղը ՀՀ-ն ստիպված էր ճանաչել վիճելի: Պատմական հայկական այս երկրամասերը ժամանակավորապես զբաղեցնելու էին խորհրդային զորքերը մինչև կորոշվեր նրանց պատկանելիությունը:

Դրված էր Հայաստանի խորհրդայնացման հարցը, ուստին պատահական չէ, որ Հայաստանի տարածք Կարմիր Բանակի մուտքին զուգահեռ, Խորհրդային Ադրբեջանի կառավարության ղեկավար Ն. Նարիմանովը Բաքվի Խորհրդում հանդես եկավ դեկլարացիայով, ըստ որի, «Ադրբեջանն ընդառաջ էր գնում եղբայրական ու աշխատավոր հայ ժողովրդի պայքարին դաշնակների իշխանության դեմ և հայտարարում, որ այդուհետ վիճելի հարցեր չկան հայերի և մահմեդականների միջև, Նախիջևանի ու Զանգեզուրի գավառները Խորհրդային Հայաստանի անբաժան մասերն են, իսկ Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում էր լիարժեք ինքնորոշում»: Իրավիճակը կտրուկ փոխվեց Հայաստանի խորհրդայնացումից հետո, որը չլուծեց առկա տարածքային խնդիրները: Բոլշևիկա-քեմալական դաշինքի, համաշխարհային հեղափոխությունը մահմեդական արևելքում տարածելու, Արևմուտքի հետ առճակատման պայմաններում 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված խորհրդա-թուրքական պայմանագրով Նախիջևանի երկրամասը թուրքերի պահանջով միացվեց Խորհրդային Ադրբեջանին՝ առանց Հայաստանի և հայ ժողովրդի շահերն ու պահանջները հաշվի առնելու: Համաձայն այդ պայմանագրի երրորդ հոդվածի «Երկու պայմանավորվող կողմերը համաձայնվում էին, որ Նախիջևանի մարզը կազմի ինքնավար

տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջելու երրորդ պետությանը»: Պայմանագրի կողմեր Խորհրդային Ռուսաստանն ու Քեմալական Թուրքիան որպես երրորդ պետություն նկատի ունեցան Հայաստանը, որից խլվեցին նրա պատմական հողերը, իսկ նույն պայմանագրով Թուրքիային անցան Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը: Հատկանշական է, որ Թուրքիային անցավ նաև իրանական ենթակայության տակ (Մակու) գտնվող և Երևանի նահանգի մաս (Սուրմալու գավառի) չկազմող Վերին Կարասու և Արաքս գետերի միջակայքի նեղ հողատարածքը: Այդ միջանցք-տարածքով Թուրքիան անմիջական սահմանային կապ ապահովեց Նախիջևանի հետ, միևնույն ժամանակ, շրջափակեց Հայաստանը՝ հույս ունենալով, որ Զանգեզուրը նույնպես կհայտնվի ցեղակից Ադրբեջանի կազմում՝ վերահսկելի դարձնելով Բաքվի հետ ազատ հաղորդակցությունը:

1923 թ. փետրվարի 27-ին ստեղծվեց Նախիջևանի ինքնավար երկրամասը, որը նույն թվականի հունիսի 16-ին մտավ Ադրբեջանի ԽՍՀ կազմի մեջ, իսկ 1924 թ. փետրվարի 9-ին վերակազմվեց որպես Նախիջևանի Ինքնավար Խորհրդային հանրապետության:

Այսպես Խորհրդային Ադրբեջանի կազմում հայտնվեց Նախիջևանի ինքնավար հանրապետությունը, որը ԽՍՀՄ կազմի մեջ միակ ինքնավար հանրապետությունն էր, որը ձևավորվել էր առանց էթնիկ-դավանական առանձնահատկության:

Խորհրդային իշխանության շուրջ 70 տարիների ընթացքում ադրբեջանական իշխանությունները լիովին հայաթափեցին Նախիջևանը, իրականացրեցին «սպիտակ գենոցիդի» քաղաքականություն՝ վերացնելով նաև երկրամասի հայկական պատմամշակութային ժառանգությունը:

Նախիջևանի հայաբնակ գյուղերն երկրամասի իշխանությունների կողմից միտումնավոր կերպով դատապարտվում էին սովամահության, արտագաղթի, ինչի մասին Խորհրդային Հայաստանի կառավարությանը բազմիցս դիմումներ էին հղվել Նախիջևանի հայության ներկայացուցիչների կողմից: 1930-ական թթ. վերջին ստալինյան բռնաճնշումների ալիքը հմտորեն օգտագործվեց ադրբեջանական իշխանությունների կողմից հայկական բնակչության նկատմամբ հալածանքների կիրառման ու արտաքսման առումով: Փակվել էին հայկական կրթամշակութային հաստատությունները (գործում էին 30 գյուղական, 4 քաղաքային հայկական դպրոցներ, Նախիջևանի մանկավարժական և բժշկական ուսումնարանների հայկական բաժանմունքները, հայկական թատրոնը), հետապնդվում էին հայազգի գործիչները: Կիրառված բռնություններին զոհ են գնացել Նախիջևանի ԻԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր Հազարապետ Գրիգորյանը, Նախիջևանի ԻԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Մնացական Մինասյանը, Շահբուզի (Շահկերտի) շրջկոմի առաջին քարտուղար Մամիկոն Հովակիմյանը, պետական և կուսակցական գործիչներ Հովհաննես Գրիգորյանը, Նորիկ Գրիգորյանը և ուրիշներ: Երկրամասի հայկական բնակչությանը հայրենի օջախներից արմատախիլ անելու քաղաքականության նոր դրսևորում էին 1950-ական թթ. հալածանքները, որոնց արդյունքում դատարկվեցին Աստապատ, Երնջակ, Լենինաբադ գյուղերի, Նախիջևան ու Ջուլֆա (Ջուղա) քաղաքների հայության մեծ մասը:

Նախիջևանի իշխանությունները կանխամտածված խոչընդոտում էին Հայաստանի հետ մշակութային կապերը, չէին բաժանորդագրում հայկական պարբերականները: Հայաստանի կառավարությունը, ինչպես հարկն է, չի կարողացել սատարել նախիջևանահայությանը, ապահովել մանկավարժական, բժշկական ու մշակույթի բնագավառների մասնագետներով, միջամտել ու կասեցնել հայաթափությունը, մշակութային արժեքների ոչնչացումը:

Նախիջևանի ԻԽՍՀ զինանշանը Նախիջևանի ԻԽՍՀ դրոշը

1960 թվականից սկսած երկրամասի շրջկոմները, առավելապես հայկական բնակչությամբ գյուղերի վրա դրեցին գյուղատնտեսական առաջադրանքների մեծ մասը, աշխատանքից հեռացվում էին հեղինակություն վայելող հայազգի ղեկավար կադրերը: Այդ նպատակով Գյումուր և Առինջ գյուղերի կոլտնտեսությունների հայազգի նախագահներին աշխատանքից հեռացնելուց հետո այդ գյուղերի, ինչպես նաև Բաբունքի, Ղարաբաբայի, Օցուպի, Բադամլուի, Նորսի, Շահապոնք ու Շահբուզ շրջկենտրոնների հուսալքված հայությունը սկսեց գաղթել Հայաստան:

Նախիջևանի հայկական հետքը իսպառ վերացնելուն էր ուղղված նաև երկրամասի իրավական փաստաթղթերից ու խորհրդանիշերից հայերի գոյությանը վերաբերող բոլոր տեսակի սրբագրումները: Այսպես, մինչև 1937 թ. Նախիջևանի ԻԽՍՀ դրոշի վրա առկա էր գրություն ադրբեջաներեն և հայերեն լեզուներով (նաև զինանշանի վրա), սակայն երկրամասի Սահմանադրության մեջ 1938–1939 թթ. համապատասխան «շտկումներից» հետո դրոշի հայերեն գրությունը անհետացավ:

Նախիջևանի ԻԽՍՀ-ն և ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու խնդրով Հայաստանի իշխանություններն ու հասարակությունը բազում դիմումներ են հղել միութենական ու կուսակցական մարմիններին: ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Գ. Հարությունյանը 1945 թ. նամակով դիմել է Ի. Ստալինին հիշյալ հայկական երկրամասերի վերամիավորման խնդրով, որի լուծման կարևորությունը պատճառաբանում էր այն հանգամանքով, որ Ադրբեջանի կազմում այդ երկրամասերի զարգացման հնարավորությունները բավարար չէին օգտագործվում: 1966 թ. սեպտեմբերին ԽՄԿԿ Կենտկոմի հանձնարարությամբ քննարկվել է Հայկական ԽՍՀ գիտության և մշակույթի մի խումբ գործիչների՝ ԽՄԿԿ

XXIII համագումարին հասցեագրված նամակը, որում բարձրացվում էր ԼՂ-ն և Նախիջևանի ԻԽՍՀ-ն Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու հարցը: Ուսումնասիրելով և վերլուծելով նամակի բովանդակությունը, ստեղծված իրավիճակը՝ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ա. Քոչինյանի և ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահ Բ. Մուրադյանի անունից ԽՄԿԿ ԿԿ-ին տեղեկացվել է, որ այդ հարցը չվճռելը լուրջ դժվարություններ է ստեղծում կուսակցական մարմինների գործունեության և հանրապետության բնակչության լայն խավերի շրջանում քաղաքական դաստիարակչական աշխատանքների իրականացման համար:

Նախիջևանի ԻԽՍՀ իշխանությունները, երկրամասից հայ բնակչությանը դուրս մղելուն զուգահեռ, իրագործել են հայկական պատմամշակութային ժառանգության նպատակային ոչնչացում: Երկրամասի հայկական հուշարձանների թիվն անցում էր 4500 միավորից:

Այսպես, Աստապատի հայաթափումը սկիզբ է առել Արաքս գետի վրա ՀԷԿ կառուցելու ԽՍՀՄ-ի և Իրանի միջև 1963 թ. հուլիսին կնքված պայմանագրով, գյուղի պատմաճարտարապետական հուշարձանները, բնակելի տները և դպրոցը մնացել են ջրի տակ: 1971 թ. Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին հուշարձան կառուցելու համար «ընտրվել է Նախիջևան քաղաքի հայկական գերեզմանատունը, որը թաղվեց հողի, ավազի և շինարարական աղբի կույտերի տակ, իսկ տապանաքարերի մի մասն էլ օգտագործվեց հանրապետական հիվանդանոցի պատերը շարելու համար: Նախիջևանում շինարարություն իրականացնելու պատրվակով 1975 թ. ավերվել է նաև VII դարում կառուցված Սբ. Երրորդություն հայկական եկեղեցին, իսկ 1986 թ. Օցուպի Սբ. Ստեփանոս եկեղեցու ավերումն արագացնելու համար այստեղից պոկել են հսկայական քարեր, Ցղնա գյուղի եկեղեցին վերածվել է թունաքիմիկատների և պարարտանյութերի պահեստի, Ագուլիսի հոյակերտ եկեղեցիները՝ փարախների և գոմերի: Պայթյունների միջոցով հիմքից ավերվել են Աբրակունիսի, Շոռոթի և Մեծոփի եկեղեցիները: 1987 թ. հոկտեմբերին Նախիջևանի իշխանությունների ցուցումով ավերվել է Ագուլիսի հայկական գերեզմանոցը, նրա միջնադարյան մոտ 400 տապանաքարերը՝ ազգագրական կարևոր արժեք ներկայացնող ավելի քան 100 արձանագրություններով: Տարիներ շարունակ Հին Ջուղայի հռչակավոր խաչքարերն անարգել տեղափոխվում և օգտագործվում էին որպես կենցաղային շինանյութ, իսկ Նախիջևանի պատմության պետական թանգարանի մուտքի մոտ տեղադրված Ջուղայի գերազմանատնից գողացված խոյաձև տապանաքարի վրայից քերվել են հայերեն արձանագրությունները, որը պետական մակարդակի վանդալիզմի և մշակութային յուրացման ակնհայտ դրսևորում էր: Հետխորհրդային տարիներին արդեն անկախ Ադրբեջանի կողմից շարունակվեց ու նոր թափ հավաքեց հայկական մշակութային եղեռնը, որի դրսևորումներից էր Հին Ջուղայի հռչակավոր հայկական գերեզմանատան հազարավոր ժանեկահյուս խաչքարերի վերջնական ոչնչացումը:

Նախիջևանի հայության թվաքանակը խորհրդային տարիներին անշեղորեն անկում ապրեց և տասնամյակներ շարունակ կիրառվող հակահայ քաղաքականության արդյունքում «ապահովվեց» ադրբեջանցիների էթնիկ գերակշռությունը երկրամասում:

1939 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքներով Նախիջևանի ԻԽՍՀ-ում բնակվում էին 13.350 (Նախիջևանի ԻԽՍՀ բնակչության 10.5 %-ը) 1959 թ.՝ 9.519 (6.7 %-ը), 1970 թ.՝ 5.828 (2.9 %), 1979 թ.՝ 3.406 (1.42 %) հայեր: Ընդհանուր առմամբ, 1926-1979 թթ. Նախիջևանի ԻԽՍՀ արդրբեջանական բնակչությունն աճել էր 2.6 անգամ, իսկ հայ բնակչությունը նվազել 3.3 անգամ, իսկ մինչխորհրդային շրջանի հայկական 44 գյուղերից մնացել էին մի քանիսը (Նախիջևանում հայ բնակչությունը մինչխորհրդային շրջանում կազմում էր մոտ 40 տոկոսը): 1989 թ. Համամիութենական մարդահամարով երկրամասում նշվում էր 1906 հայ (0,65%), որոնք ցաքուցրիվ բնակվում էին երկրամասի քաղաքներում և պատմական Գողթան գավառի գյուղերում (Ցղնա, Փառակա, Բիստ, Վերին Ազա, Դեր, Ռամիս, Տանակերտ, Ալահի, Մեսրոպավան): Նախիջևանահայերի համախումբ բնակության վերջին հենակետը Ազնաբերդն էր իր 450 ընտանիքներով:

ԽՍՀՄ փլուզման շեմին Ադրբեջանական ԽՍՀ-ում աճող հակահայկական ալիքն ու ջարդարարությունը տեղ գտավ նաև Նախիջևանի ԻԽՍՀ-ում: Հայության վերջնական տեղահանությունն իրագործվեց 1988 թ. նոյեմբերի 22-ին, երբ Նախիջևանի կենտրոնում կազմակերպված հակահայկական հանրահավաքից հետո մոլեռանդ ամբոխը ցրվեց քաղաքով հայերի նկատմամբ հաշվեհարդար սկսելու համար: Կեսգիշերին ուշացումով հայտարարվեց արտակարգ դրությունը, սակայն քաղաքի վերջին 122 հայ ընտանիքներն արդեն հեռացել էին:

Նույն ճակատագրին արժանացան նաև երկրամասի մնացած հայկական բնակավայրերը: կազմակերպված ինքնապաշտպանություն իրականացրեց միայն հայկական Ազնաբերդը: Նախիջևանահայերի վերջին մնացորդները զոհեր տալով գաղթեցին և վերաբնակվեցին հիմնականում Վայքի, Եղեգնաձորի, Արարատի, Արտաշատի, Մասիսի, Կոտայքի շրջաններում ու Երևանում: Նախիջևանի հայկական հինավուրց հողը հայաթափվեց, հայկական բնիկ տարրը դուրս մղվեց՝ իր ժողովրդագրական, սոցիալ-մշակութային, հասարակական-քաղաքական ասպեկտներով:

Նախիջևանը հայաթափելուց հետո և արցախյան շարժման ծավալմանը զուգահեռ երկրամասը, ուր նկատելիորեն մեծացել էր թուրքական ազդեցությունը, որի արդյունքում 1990 թ. հունվարի 19-ին Նախիջևանի ԻԽՍՀ ԳԽ արտակարգ նիստում ընդունվեց որոշում՝ հանրապետությունը ԽՍՀՄ կազմից դուրս հայտարարելու վերաբերյալ: Ակնհայտ էր, որ դեռևս ԽՍՀՄ փլուզման շեմին Նախիջևանը վերածվել էր աշխարհաքաղաքական շահերի ազդեցության գոտու և տարածաշրջանային գործոնի, իսկ Թուրքիայի ղեկավարության աներկբա բնորոշմամբ երկրամասը «պատուհան է դեպի թյուրքական աշխարհ»: Նախիջևանի, որպես Ինքնավար Հանրապետություն (ՆԻՀ), «վերադարձավ» Ադրբեջանի կազմ, սակայն չեն փոխվել այդ երկրամասի հետ կապված աշխարհաքաղաքական ծրագրերը, որոնք բացահայտ ուղղված են Հայաստանի դեմ:

Հետխորհրդային տարիներին Նախիջևանում ակտիվացել է թուրքական գործոնը, այստեղ կատարվում են տնտեսական ներդրումներ, բացահայտ կերպով ընդլայնվում է թուրք-ադրբեջանական ռազմական գործակցությունը, որի նպատակն է աքցանի մեջ առնել Հայաստանը՝ լարվածություն ստեղծելով նրա սահմանների ողջ երկայնքով: